ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով ձևավորված « ՀՀՔԿԴ-ԷԱՃԱՊՁԲ-ԱՊ-18/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17.12.2018թ. ժամը 12-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Լ.Հովհաննիսյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով **Ինգլիշ Թրեյդ Հաուզ ՍՊԸ**-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/ կցվում է/, համաձայն որի ''Ինգլիշ Թրեյդ Հաուզ'' ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ 2018859 ՀՀ դրամի չափով, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով և թղթային /գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

- Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի՝ մերժել **Ինգլիշ Թրեյդ Հաուզ ՍՊԸ-ի** հայտը:

- Չեղարկել տվյալ ընթացակարգը՝ հաշվի առնելով, որ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցի հետ Պայմանագիր կարող է կնքվել մոտ 14 օրից, երբ արդեն տվյալ տարվա ֆինանսական միջոցներով հնարավոր չէ վճարում իրականացնել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան